ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1393 27.12.2013թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն. Վ. Գասպարյանին

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ»
ՄՏԻՑ № 18
«08» 01 2014

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի դեկտեմբերի 06-ին ժամը 09[30]-ին Դիտորդական խումբը այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ:

Դիտորդական խումբը ՁՊՎ մուտք գործելուց առաջ անձը հաստատող փաստաթղթերը ներկայացրել է հերթապահ ոստիկանին, որից հետո խումբը ստանում է մեկնաբանություն, որ նա իրավասու չէ Դիտորդական խմբի անդամներին ՁՊՎ-ի տարածք թողնելու, առանց ղեկավարությանը տեղյակ պահելու: Որոշ ժամանակ անց, առանց որևէ գործողություն կատարելու, նշված ոստիկանը հայտարարեց, որ Դիտորդական խմբի անդամների ցուցակը չունի և պարզաբանեց, որ Դիտորդական խումբը իրենց չի տրամադրել համապատասխան ցուցակը: Խմբի կողմից մեկնաբանություն տրվեց, որ Խումբը չպետք է իր անդամների ցուցակը տրամադրի ՁՊՎ-ին: Հաջորդիվ, որոշ ժամանակ անց, եկավ ինչ որ պատասխանատու ոստիկան և հայտարարեց, որ ցուցակը առկա է և պետք է միայն համեմատություն կատարել անձանց և ցուցակի միջև: Տեղեկացնենք, որ համեմատությունը կատարվեց ոչ ըստ Դիտորդական խմբի անդամների անձը հաստատող փաստաթղթերի՝ այլ ըստ ցուցակի բարձրաձայն կարդալով և ներկա-բացակա անելով, որից հետո միայն ներս թողեցին: Ըստ Դիտորդական խմբի՝ անհասկանալի է ՁՊՎ-ի վարչակազմի գործողությունները և պահվածքը, որի համար խնդրում ենք տալ առանձին մեկնաբանություն:

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ»
ՄՏԻՑ № 8958
28 12 13

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./Ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

Հաջորդիվ ուսումնասիրություններ կատարելու արդյունքում արձանագրվել են մի շարք թերություններ և խախտումներ .

Թերություններ.

1. Բուժսենյակի ջրի ծորակը չէր գործում:
2. 4-րդ խուցը խոնավ էր, որի հետևանքով պատերը ամբողջովին քայքայված են:
3. 4-րդ և 5-րդ խցերից անհասկանալի տհաճ հոտ էր գալիս:
4. ՀՊՎ-ի երկու հարկերի զուգարաններում զուգարանների ջրահեռացման ջրի տարանները չէին գործում և ջրերը անընդհատ հոսում էին:
5. ՀՊՎ-ում առկա որոշ օճառները ձևական բնույթ էին կրում, քանի որ վերջին երկու այցելությունների ընթացքում գտնվում էին նույն վիճակում և օգտագործման ենթակա չէին: / օճառների ամանների մեջ ջուրը և օճառը միախառնված էին/

Խախտումներ.

1. ՀՊՎ-ի բուժմատյանը ուսումնասիրելուց արձանագրվեց, որ որոշ ձերբակալվածներ ունեցել են առողջական խնդիրներ և որոնց բուժօգնությունը և բուժզննությունը իրականացրել էին ՀՊՎ-ի բուժակները, ովքեր բժիշկ չեն հանդիսանում: Խնդիրը կայանում է նրանում, որ
   - Արսեն Անդրանիկի Ավետիսյանը 22.04.2013թ-ին ժամը 22[40]-ին ՀՊՎ-ի բուժակի կողմից անցել է բուժզննություն և <<Ձերբակալված անձանց բուժօգնության և բուժզննության>> գրանցամատյանում կատարվել է հետևյալ գրառումը ***<<ձախ ձեռքի ազդրին կա վերքեր>>:*** */ կից ներկայացնում ենք փաստը հաստատող լուսանկար – 14/*
   - Հայկ Ստեփանի Աղամալյանը 10.04.2013թ-ին ժամը 06[00]-ին, ՀՊՎ-ում անցել է բուժզննություն և գրանցվել են նրա վրա առկա մարմնական վնասվածքները: <<Ձերբակալված անձանց բուժօգնության և բուժզննության>> գրանցամատյանի համապատասխան սունյակում, լրացված է որ գանգատներ չունի, բայց նրան տրամադրվել է էքստրա-վալերիանի:

     Հ. Աղամալյանը ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գնացամատյանի 11.04.2013թ-ին ժամը 14[40]-ից մինչև 17[20]-ըտեղափոխվել է քննչական գործողությունների՝ ՀՊՎ-ի տարածքից դուրս և հետ ընդունելուց ունեցել է նոր մարմնական վնասվածքներ: Առաջին դեպքում ունեցել է ***<< ձախ փեռքի բազուկին և աջ ձեռքի արմունկի բերծվածնքեր, թիկունքին՝ կարմրավուն հետքեր>>:***

Երկրորդ դեպքում մրամնական վնասվածքները ավելացել են *<< աջ նախաբազկի և դաստակի հողին կար կարմրավուն երկու հետքեր>>:*

Միաժամանակ խնդրում ենք ուշադրություն դարձնել, որ Հ. Աղամալյանը անչափահաս է: */կից ներկայացնում ենք փաստը հաստատող լուսանկար – 11,12/*

- Աշոտ Վաղարշակի Շառաֆյանը ՀՊՎ ընդունվելուց <<Ձերբակալված անձանց բուժօգնության և բուժզննության>> գնացամատյանի սունյակներում գրանցվել է, որ ՀՊՎ ընդունվելուց 26.03.2013թ-ին ժամը 01^{15}-ին և հաջորդիվ 28.03.2013թ-ին ժամը 08^{00}-ին ստացել է էքստրա-վալերիանի 3 և հաջորդաբար 4 հաբ, բայց համապատասխան գրանցամատյանի սյունյակներում ոչ գանգատ է ունեցել, ոչ մարմնական վնասվածք և ոչ էլ առողջական խնդիրներ: */կից ներկայացնում ենք փաստը հաստատող լուսանկար – 15/*
- Արսեն Եղիշի Լևոնյանը ՀՊՎ ընդունվելուց 01.04.2013թ-ին ժամը 05^{25}-ին գանգատվել է երիկամի ցավերից և առանց հետազոտվելու նրան տրամադրվել է <<սպազմագոն>> դեղահաբ, որը շարունական բնույթ է կրել 02.04.2013թ-ին ժամը 14^{20}-ին, 03.04.2013թ-ին ժամը 04^{30}-ին և նույն օրը՝ ժամը 23^{40}-ին: */կից ներկայացնում ենք փաստը հաստատող լուսանկար – 16/*

Այսպիսով՝ Դիտորդական խումբը գտնում է, որ ինչպես մարզային այնպես էլ Երևանի ՀՊՎ-ում բուժօգնությունը և բուժզննությունը պետք է իրականացվի շտապ օգնության բժիշկների կողմից, որովհետև աշխատող բուժակները չգիտեն, որ ձեռքը ազդր չունի և անձը պետք է հետզոտվի և նոր միայն դեղորայք տրամադրվի:

2. Նելլի (Քրսիտինե) Վալերիկի Հարությունյանը Երեբունու բաժնի քննչական բաժնի կողմից ձերբակալվել է 26.10.2013թ-ին ժամը 02^{40}-ին, իսկ ՀՊՎ է ընդունվել մոտ 16 ժամ անց՝ ժամը 18^{45}-ին: Արդյունքում՝ ձերբակալվածի հետ 16 ժամ քննչական գործողություն են կատարել: */կից ներկայացնում ենք փաստը հաստատող լուսանկար – 1/*
3. Արտավազդ Նորայրի Բեգնազարյանը ձերբակալվել է 28.10.2013թ-ին ժամը 18^{45}-ին: Ա. Բեգնազարյանի արգելանքի տակ գտնվելու առավելագույն ժամկետը լրանում էր 31.10.2013թ-ին ժամը 17^{15}-ին, բայց նա ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գնացամատյանի՝ քննչական գործողությունների է տեղափոխվել 31.10.2013թ-ին ժամը 11^{35}-ից մինչև 18^{35}-ը: */կից ներկայացնում ենք փաստը հաստատող լուսանկար – 1, 2/*
4. Սամվել Ռաֆիկի Եղոյանը ձերբակալվել է 30.10.2013թ-ին ժամը 16^{20}-ին: Ս. Եղոյանի արգելանքի տակ գտնվելու առավելագույն ժամկետը լրանում էր 02.11.2013թ-ին ժամը 16^{20}-ին, բայց նա ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>>

գրանցամատյանի՝ քննչական գործողությունների է տեղափոխվել 02.11.2013թ-ին ժամը 12^{45}-ին և միայն ժամը 21^{40}-ին ստացվել է նրա ազատ արձակման որոշումը */ կից ներկայացնում ենք փաստը հաստատող լուսանկար – 3,4/*

5. Արմեն Գուրգենի Խաչատրյանը ձերբակալվել է 01.11.2013թ-ին ժամը 21^{30}-ին: Ա. Խաչատրյանի արգելանքի տակ գտնվելու առավելագույն ժամկետը լրանում էր 04.11.2013թ-ին ժամը 21^{30}-ին, բայց նա ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գնացամատյանի՝ քննչական գործողությունների է տեղափոխվել 04.11.2013թ-ին ժամը 13^{05}-ին և միայն ժամը 23^{55}-ին ստացվել է ազատ արձակման որոշումը: */ կից ներկայացնում ենք փաստը հաստատող լուսանկար – 5,6/*
6. Էլիալմ Ղասենի Շիրխանի ձերբակալվել է 08.11.2013թ-ին ժամը 16^{40}-ին: Նրա արգելանքի տակ գտնվելու առավելագույն ժամկետը լրանում էր 11.11.2013թ-ին ժամը 14^{40}-ին, բայց նա ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գնացամատյանի՝ քննչական գործողությունների է տեղափոխվել 11.11.2013թ-ին ժամը 14^{00}-ից մինչև 18^{45}:*/ կից ներկայացնում ենք փաստը հաստատող լուսանկար – 7,8/*
7. Արսեն Յուրիկի Կարապետյանը ձերբակալվել է 08.11.2013թ-ին ժամը 16^{30}-ին: Նրա արգելանքի տակ գտնվելու առավելագույն ժամկետը լրանում էր 11.11.2013թ-ին ժամը 14^{30}-ին, բայց նա ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գնացամատյանի՝ քննչական գործողությունների է տեղափոխվել 11.11.2013թ-ին ժամը 14^{40}-ին և միայն 12.11.2013թ-ին ժամը 02^{10}-ին ստացվել է նրան ազատ արձակելու մասին որոշումը: */ կից ներկայացնում ենք փաստը հաստատող լուսանկար – 9,10/*
8. Արմենակ Դավիթի Ջավադյանը ձերբակալվել է Էրեբունու քննչական բաժնի կողմից 22.04.2013թ-ին ժամը 07^{30}-ին, բայց ՁՊՎ է ընդունվել մոտ 20 ժամ անց՝ 23.04.2013թ-ին ժամը 03^{40}-ին: Ավելացնենք նաև որ ըստ Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ի <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գնացամատյանի՝ Ա. Ջավադյանը ՀՀ ԱՆ <<Աբովյան>> ՔԿՀ է տեղափոխվել 25.04.2013թ-ին ժամը 11^{50}-ին, բայց Դիտորդական խումբը համագործակցելով ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի հետ ստացել է իմֆորմացիա, որ ըստ ՀՀ ԱՆ <<Աբովյան>> ՔԿՀ-ի մատյանների Ա. Ջավադյանը ՔԿՀ է ընդունվել 26.04.2013թ-ին ժամը 19^{30}-ին, մոտ՝ 32 ժամ անց: */ կից ներկայացնում ենք փաստը հաստատող լուսանկար – 13/*
9. Գայանե Արթուրի Գրիգորյանը ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի և պատասխանատու ոստիկանների մեկնաբանության ՀՀ Ոստիկանության Կենտրոնի բաժին բերման է ենթարկվել 04.12.2013թ-ին ժամը 11^{30}-ին,

սակայն անձի բերման ենթարկելու արձանագրությունը բացակայում էր անձնական գործում և որի վերաբերյալ վարչակազմը մեկնաբանեց, որ քննիչը խոստացել է, որ մոտ ժամանակները կփոխանցի: Գ. Գրիգորյանը բերման ենթարկվելուց հետո, մոտ 7 ժամ անց է ձերբակալվել, ժամը 18[10]-ին և ՀՊՎ է տեղափոխվել 11 ժամ անց՝ 05.12.2013թ-ին ժամը 05[20]-ին: */կից ներկայացնում ենք փաստը հաստատող լուսանկար – 17,18/*

Այսպիսով խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն ներկայացվածի վերաբերյալ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1- 231 << 06 >> 02 2014թ.

Ձեր 27.12.2013թ. թիվ 2621/1393 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2013թ. դեկտեմբերի 6-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված խախտումները և թերությունները ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, քննչական գլխավոր և Երևան քաղաքի վարչություններում, որի կապակցությամբ տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Այցելության ժամանակ դիտորդական խումբը փոքրինչ ուշացումով է մուտք գործել ՁՊՎ վարչական շենք այն պատճառով, որ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ առաջին պահակակետի ավագ ոստիկան, ոստիկանության ենթասպա Է.Թովմասյանը ճշտել է դիտորդների խմբի անդամների ինքնությունը, զեկուցել է ՁՊՎ ավագ տեսուչ-հերթապահ, ոստիկանության փոխգնդապետ Ա.Նալբանդյանին, դիտորդների խմբի անդամների վկայականները ստուգելուց հետո գրանցում է կատարել համապատասխան մատյանում, որից հետո ավագ տեսուչ-հերթապահ, ոստիկանության մայոր Ա.Սիմոնյանը դիտորդների խմբին ուղեկցել է ՁՊՎ վարչական տարածք:

Թերություններ.

1. Բուժսենյակի ջրի ծորակը փոխարինվել է նորով և ներկայումս գործում է:

2. ՁՊՎ-ի 4-րդ խուցը գտնվում է վարչական շենքի առաջին հարկում և լոգարանի հետ ունի ընդհանուր պատ, այդ պատճառով այն անընդհատ խոնավանում է: Նշված խուցը 3 տարի անընդմեջ վերանորոգվել է, իսկ վերջին վերանորոգումը կատարվել է 10.03.2013թ.: Ներկայումս այնտեղ դարձյալ կատարվում են վերանորոգման աշխատանքներ:

3. ՁՊՎ-ի 4-րդ և 5-րդ խցերը գտնվում են լոգարանի հարևանությամբ, որի հետևանքով խոնավանում են և ժամանակ առ ժամանակ այնտեղից խոնավության հոտ է գալիս, ինչի համար խցերը ամեն օր ախտահանվում են: Հարկ է նշել, որ նշված խցերում ձերբակալված անձինք չեն պահվում:

4. Ստուգման ընթացքում զուգարաններում զուգարանագոգերի ջրի տարաներից ջրի անընդհատ հոսքը ոչ թե տարաների անսարքության հետևանք է, այլ այն կապված է եղել այդ ժամին կատարվող սանմաքրման աշխատանքների հետ: Ներկայումս նշված տարաները գործում են անխափան:

5. ՁՊՎ ընդունվող յուրաքանչյուր ձերբակալվածին տրամադրվում է նոր օճառ, իսկ նախկին օգտագործվածը հեռացվում է: Օճառի և ջրի միախառնված լինելը ձերբակալվածների անփույթ օգտագործման հետևանք է:

Խախտումներ.

1. Համաձայն ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 13-րդ կետի ձերբակալվածի մոտ մարմնական վնասվածք կամ ակնհայտ հիվանդության նշաններ հայտնաբերելու կամ առողջության վերաբերյալ գանգատ լինելու դեպքում ոստիկանության մարմնի հերթապահը հրավիրում է բուժաշխատողի, հրավիրված բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որին կարող է մասնակցել նաև ձերբակալված անձի ցանկությամբ ընտրված բժիշկը...: Նույն կանոնակարգի 177-րդ կետի համաձայն ՁՊՎ-ում պահվող ձերբակալվածներին առաջին բուժօգնությունը ցույց է տրվում ՁՊՎ-ի բուժաշխատողի կամ շտապօգնության մասնագիտացված ծառայության կողմից:

- Ձերբակալված Արսեն Ավետիսյանի վերաբերյալ <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում 22.04.2013թ. ժամը 22.40-ին կատարված գրառումը՝ <<ձախ ձեռքի ազդրին կան վերքեր>> պարզապես վրիպակ է, որի մասին ՁՊՎ-ի ղեկավարությունը տեղյակ է պահել դիտորդների խմբին՝ հայտնելով, որ այն չի շտկվել, գրանցամատյանում ջնջումներ չլինելու համար:

- Հայկ Աղամալյանը ՁՊՎ է ընդունվել 10.04.2013թ. ժամը 06.00-ին, որի մոտ հայտնաբերվել է մարմնական վնասվածք, ինչի վերաբերյալ <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում կատարվել են համապատասխան գրառումներ և իրազեկվել է վարույթն իրականացնող մարմնին: ՁՊՎ ընդունվելու պահին Հ.Աղամալյանը գանգատներ չի ունեցել, որը նշվել է վերոգրյալ մատյանում, սակայն ընթացքում ունեցել է սրտի ծակոցներ, ինչի համար նրան տրվել է էքստրա-վալերիան: 11.04.2013թ. ժամը 17.20-ին առաջին դատական նիստից հետո ՁՊՎ վերադառնալով, Հ.Աղամալյանը խցում կատարել է ինքնավնասում՝ աջ ձեռքի դաստակի ներսի մասը շփելով մահճակալի երկաթյա խողովակին և ստացել մարմնական վնասվածք: Փաստի առթիվ անմիջապես ահազանգ է տրվել ոստիկանության Երևան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոն և ոստիկանության Էրեբունու բաժին, որի մասին <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում կատարվել է մարմնական վնասվածքի վերաբերյալ երկրորդ գրառումը: 12.04.2013թ. դատարանի կողմից որոշում է կայացվել Հ.Աղամալյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել կալանավորումը և վերադարձվել է ՁՊՎ: 13.04.2013թ. ժամը 09.20-ին կրկին չափվել է վերջինիս արյան ճնշումը և նրա անհանգիստ վիճակի համար նորից տրվել է էքստրա-վալերիան, որից հետո տեղափոխվել է ՔԿՀ;

- Աշոտ Շառաֆյանը 26.03.2013թ. ժամը 01.15-ին ընդունվել է ՁՊՎ: Ընդունման պահին առողջության հետ կապված գանգատներ չի ունեցել, ինչի մասին գրանցամատյանի համապատասխան սյունակում կատարվել է գրառում: Քիչ հետո Ա.Շառաֆյանը գանգատվել է սրտի ծակոցներից և նրան տրվել է էքստրա-վալերիանայի հաբ: Նույն գանգատները Ա.Շառաֆյանը հայտնել է նաև երկու օր հետո՝ 28.03.2013թ. ժամը 08.00-ին, որի համար նրան դարձյալ տրվել է էքստրա-վալերիանայի հաբ:

- Արսեն Լևոնյանը 01.04.2013թ. ժամը 05.25-ին ընդունվել է ՁՊՎ, սահմանված կարգի համաձայն ենթարկվել է բուժզննության, ըստ ձերբակալվածի բանավոր հայտարարության երիկամների շրջանում ունեցել է ցավեր և նրան տրվել է սպազմագոն: Ցավերը շարունակական բնույթ են կրել, սակայն ձերբակալվածի մոտ ծայրահեղ վիճակ չի գրանցվել, ինչի համար շտապ բուժօգնության խումբ չի հրավիրվել:

2 Նելլի Հարությունյանը 26.10.2013թ. ժամը 02.40-ին բերման է ենթարկվել ոստիկանության Էրեբունու բաժին, որտեղ նյութերի նախապատրաստման ընթացքում վերջինս իր ինքնության և կենսագրական տվյալների վերաբերյալ հայտնել է աղավաղված տեղեկություններ: Ժամը 05.40-ին Ն.Հարությունյանն ազատ է արձակվել և նրա ազատ տեղաշարժվելու իրավունքը չի սահմանափակվել: Նույն օրը, ժամը 13.30-ին Ն.Հարությունյանի անձնական տվյալները ճշտելուց հետո վերջինս ներկայացվել է Էրեբունու քննչական բաժին: Ն.Հարությունյանը քննիչի կողմից ձերբակալվել է 26.10.2013թ. ժամը 14.10-ին, և հարցաքննությունից հետո՝ ժամը 18.45-ին ընդունվել է ՁՊՎ, սակայն <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում թյուրիմացաբար գրվել է ոչ թէ ձերբակալման այլ բերման ենթարկելու (02.40) ժամը:

3. Արտավազդ Բեկնազարյանը ձերբակալվել է 28.10.2013թ. ժամը 17.15-ին, այլ ոչ թե 18.45-ին և մինչև ձերբակալման 72 ժամը լրանալը՝ 31.10.2013թ. ժամը 11.35-ին նա տեղափոխվել է ՁՊՎ-ից դուրս՝ քննչական գործողություններ կատարելու և այդ ընթացքում վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ փաստացի ազատվել է արգելանքից, սակայն ՁՊՎ վարչակազմը քննիչի կողմից կայացված ազատման որոշումը ստացել է նույն օրը ժամը 18.35-ին:

4. Սամվել Եղոյանը ձերբակալվել է 30.10.2013թ. ժամը 16.00-ին այլ ոչ թե 16.20-ին: Մինչև ձերբակալման 72 ժամը լրանալը՝ Ս.Եղոյանը 02.11.2013թ. ժամը 12.45-ին տեղափոխվել է ՁՊՎ-ից դուրս՝ քննչական գործողություններ կատարելու և այդ ընթացքում վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ նա փաստացի ազատվել է արգելանքից, սակայն ՁՊՎ վարչակազմը քննիչի կողմից կայացված ազատման որոշումը ստացել է նույն օրը ժամը 21.40-ին:

5. Արմեն Խաչատրյանը ձերբակալվել է 01.11.2013թ. ժամը 21.30-ին և մինչև ձերբակալման 72 ժամը լրանալը՝ Ա.Խաչատրյանը 04.11.2013թ. ժամը 13.05-ին տեղափոխվել է ՁՊՎ-ից դուրս՝ քննչական գործողություններ կատարելու և այդ ընթացքում վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ նա փաստացի ազատվել է արգելանքից, սակայն ՁՊՎ վարչակազմը քննիչի կողմից կայացված ազատման որոշումը ստացել է նույն օրը ժամը 23.55-ին:

6. Էլիալմ Շիրխանին ձերբակալվել է 08.11.2013թ. ժ.16.40-ին և նրա արգելանքի տակ գտնվելու առավելագույն ժամկետը լրանում է 11.11.2013թ. ժ.16.40-ին, այլ ոչ թե 14.40-ին: Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը քննության առնելու համար Է.Շիրխանին 11.11.2013թ. ժ.14.00-ին տեղափոխվել է դատարան և դատարանի կողմից նրա նկատմամբ կայացվել է կալանքի որոշում: Նույն օրը ժ.17.45-ին Է.Շիրխանին որպես կալանավոր տեղափոխվել է ՁՊՎ և հաջորդ օրը՝ 12.11.2013թ. ժ.10.50-ին տեղափոխվել <<Աբովյան>> ՔԿՀ:

7. Արսեն Կարապետյանը ձերբակալվել է 08.11.2013թ. ժամը 16.30-ին: Նրա արգելանքի տակ գտնվելու առավելագույն ժամկետը լրանում էր 11.11.2013թ. ժամը 16.30-ին, այլ ոչ թե ժամը 14.30-ին: Մինչև ձերբակալման 72 ժամը լրանալը՝ Ա.Կարապետյանը 11.11.2013թ. ժամը 14.40-ին տեղափոխվել է ՁՊՎ-ից դուրս՝ քննչական գործողություններ կատարելու և այդ ընթացքում վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ նա փաստացի ազատվել է արգելանքից, սակայն ՁՊՎ վարչակազմը քննիչի կողմից կայացված ազատման որոշումը ստացել է 12.11.2013թ. ժամը 02.10-ին:

Հարկ է նշել, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից ձերբակալված անձանց արգելանքից ազատելու մասին որոշումներն ուշացումով ՁՊՎ ստացվելու հանգամանքը պայմանավորված է եղել զուտ տեխնիկական բնույթի խնդիրներով, որոնց հետևանքով ձերբակալված անձանց իրավունքները չեն խախտվել:

8. Արմենակ Ջավադյանը բերման է ենթարկվել 22.04.2013թ. ժամը 07.30-ին և ձերբակալվել է նույն օրը ժամը 10.30-ին: Ա.Ջավադյանի մասնակցությամբ կատարվել են մի շարք անհետաձգելի քննչական գործողություններ և 23.04.2013թ. ժամը 03.40-ին տեղափոխվել է ՁՊՎ: 24.04.2013թ. ժամը 14.50-ին Ա.Ջավադյանը տեղափոխվել է դատարան կալանավորումը

որպես խափանման միջոց կիրառելու հարցը քննության առնելու: Դատարանի որոշմամբ Ա.Ջավադյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը և նույն օրը որոշումը տրամադրվել է ՁՊՎ վարչակազմին՝ Ա.Ջավադյանին <<Աբովյան>> ՔԿՀ տեղափոխելու համար: 25.04.2013թ. ժամը 11.50-ին Ա.Ջավադյանը ոստիկանության Երևան քաղաքի վարչության ուղեկցող դասակի կողմից տեղափոխվել է <<Աբովյան>> ՔԿՀ: Ինչ վերաբերվում է ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի կողմից տրամադրված ինֆորմացիային, որ Ա.Ջավադյանը ՔԿՀ է ընդունվել 26.04.2013թ. ժամը 19.30-ին, ապա այդ տեղեկատվությունն իրականությանը չի համապատասխանում և նշվածի վերաբերյալ առկա է համապատասխան փաստաթուղթ:

9. Գայանե Գրիգորյանը ոստիկանության Կենտրոնական բաժին բերման է ենթարկվել 04.12.2013թ. ժամը 11.30-ին, երեք ժամ անց վերջինս ազատ է արձակվել, իսկ նախապատրաստված նյութերն ուղարկվել են Կենտրոնի քննչական բաժին: Նույն օրը ժամը 18.10-ին Կենտրոնի քննչական բաժնում ձերբակալվել է: Հարուցված քրեական գործի շրջանակներում Գ.Գրիգորյանի մասնակցությամբ կատարվել են մի շարք անհետաձգելի քննչական գործողություններ՝ խուզարկվել են Երևան քաղաքի Կիևյան և Թումանյան փողոցներում գտնվող թվով 2 բնակարաններ, որից հետո 05.12.2013թ. ժամը 05.20-ին Գ.Գրիգորյանը տեղափոխվել է ՁՊՎ: Ինչ վերաբերվում է Գ.Գրիգորյանի անձնական գործում նրան ոստիկանության բաժին բերման ենթարկելու մասին արձանագրության բացակայելուն, ապա այն ՁՊՎ է ներկայացվել փոքրինչ ուշ, որի համար ՁՊՎ վարչակազմը նախազգուշացվել է:

Միաժամանակ հայտնվում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205[1]-րդ հոդվածը սահմանում է միայն ***հարցաքննության որպես քննչական գործողության*** առավելագույն տևողությունը, իսկ մյուս քննչական կամ դատավարական գործողությունների կատարման համար օրենսդիրը առավելագույն տևողություն չի սահմանում:

ՀՀ ոստիկանության շտաբ